

35. ՓՈՐԸՄՆԱ ՃՈԽՏԱԿ ԸՐԱԽՈՐՑԸ ԻԼԱՄ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ մին կնեգյ։ Էս կնգանը մարթն էլ մըեռած ա իլալ։ Էս կնեգյը մին ճոխտակ տղա յա պիրալ։ Համ էլ շատ քյասիր ա իլալ։ Կափըռել հրեշտակը աստված ղրկալ ա, թա. «Քյինա՞ էն կնգանը հոքին պիր»։ Հրեշտակը քյինացալ ա տռնավը նի մըտալ, տրեսալ շատ քյասիր ըն հու ճոխտակ ըրախան էլ պիրած։ Վըեր էս տրեսալ ա, ղիմիշ չըրալ հոքին առնի, ետ ա տառալ Կափըռել հրեշտակը, քյինացալ աստծու կուշտը։ Ասված ասալ ա. «Բա խե՞ չի պիրիր»։ Կափըռել հրեշտակն ասալ ա. «Քյինացալ ի, տռնավը նի մտի, տրեսնամ շատ քյասիր հու ճոխտակ ըրախան էլ պիրած, տրա հետի պիրի ոչ»։ Աստված ասալ ա. «Տո՞ւ աստուծու պանը կարող չըս քընընես, քյինա՞ հոքին պիր»։ Նա էլ քյինացալ ա հոքին առալ, պիրալ։ Վախտավ էս ճոխտակ ըրախորցը մինը մին քաղաքի յրա յա թաքավեր նստալ, մինը՝ մին քաղաքի։ Աստված Կափըռել հրեշտակին ասալ ա, թա. «Տեսի՞ր, վըեր ասում ըմ աստուծու պանը կարող չըս քընընե՞ս»։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինկյնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին։